

Paper by George E. P.

Mathematical

young II

835  
q - 90

1915

- 6 NOV 2011

835

4-90

ԿՈՎԿԱՄԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 23

48.

## ԳՐԻՄ ԵՂԲԱԶՐՆԵՐԻ

# ՀԵՔԻԱԹՆԵՐԼ

Թուս. Թարգմանեց ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊՐԱԿ

- 1 ԿԱՐՄՐԻԿԵ
- 2 ՄՈԽՐՈՏԵ
- 3 ՃԵՐՄԱԿ ՕՁԵ

835  
4-90

ԹԻՖԼԻԶ  
Յաղաթանալի, Դօլից. 7  
1915

26.03.2013

1279

## ԿԱՐՄԻԿԵ



Լինում է չի լինում՝ մի  
փոքրիկ սիրուն աղջիկ է լինում:  
Ով մի անգամ տեսնում է՝ սի-  
րում է էս աղջկանը, բայց ա-  
մենից շատ իր տատն է սիրում.  
Էլ չի իմանում ինչ անի, որ  
թոռան սիրտը շահած պահի:

Մի անգամ էլ մի կարմիր  
գլխարկ է նսիրում: Էս կարմիր  
գլխարկն էնքան է սազ գալիս  
էս աղջկանը, որ էլ չի ուզում  
գլխին ուրիշ գլխարկ դնի բացի

կարմրից: Կարմիր շորեր էլ հագնում են, ոտից մինչև գը-  
լուխ կարմրում է, դըա համար էլ անունը դնում են կար-  
մրիկ:

Մի անգամ մէրը կարմրիկին ասում է.

— Առ էս գաթէն ու էս գինին տար տուր տատին. հի-

3664-55

Ը



ւանդացել է, թուլացել է, թող ուտի, խմի, մի քիչ ուժի գայ: Դէ, քանի օրը շոք չի, գնա, միայն կարգին, կամաց գնա, ճամփից էլ չը ծուես, թէ չէ վեր կընկնես շիշը կը ջարդես, էլ տատի համար բան չի մնալ: Տատի մօտ էլ որ մտնես՝ չը մոռանաս՝ տատին բարես: Էնտեղ էլ հանդիստ կաց, դէս ու դէն չը վազվես:

— Հա, մայրիկ, ինչպէս ասում ես՝ էնպէս կանեմ, խօսք է տալիս կարմրիկն ու գնում:

Տատը ապրելիս է լինում գիւղից մի կէս ժամ հեռու, անտառի մէջ: Կարմրիկը հէնց անտառն է մտնում թէ չէ, դէմը դուրս է գալիս մի գէլ: Բայց կարմրիկը չի խմանում թէ գէլն ինչ սարսափելի գազան է ու իսկի չի էլ վախենում:

— Բարով, կարմրիկ, ասում է գէլը:

— Բարով, Գէլ-ախպէր:

— Էսպէս վաղ-վաղ ուր ես գնում, կարմրիկ:

— Գնում եմ տատիս մօտ:

— Էղ ի՞նչ ես տանում գոգնոցումդ:

— Գաթայ ու գինի եմ տանում: Մենք երէկ գաթայ թլխեցինք, տատիկս հիւանդացել է, թուլացել է, տանում եմ որ գաթէն ուտի, գինին էլ խմի՝ ուժի գայ:

— Քու տատը որտեղ է ապրում:

— Անտառում, մի քառորդ ժամի ճամփայ էլ կայ մինչև էնտեղ: Էնտեղ երեք կաղնի ծառ կայ, էն ծառերի տակին է նրա տունը, այ էն, որ չորս կողմն էլ տկողնի ցանկապատ ունի. հիմի կարելի է յիշես:

Կարմրիկն էսպէս խօսում է, իսկ գէլն իրան-իրան միտք է անում.

— Էս փոքրիկ, քնքոյշ աղջիկը ի՞նչ անուշ պատառ է... սա աւելի համով կը լինի քան թէ պառաւը: Ապա, քեզ տեսնեմ, մեր տղայ, բանդ էնպէս խելքով բռնի, որ ջուխտն էլ ճանկդ գցես»:

Մի քիչ կարմրիկի հետ գնում է ու ասում.

— Մի գէսը մտիկ արա է, կարմրիկ, տես ի՞նչ հիանալի

ծաղիկներ են փուած մեր չորս կողմը: Մի չես կանգնում ու չես հիանում սրանցով: Մի լսիր, տես թոչուններն ի՞նչ ուրախ երգում են: Հէնց ուղիղ քշած, սուս ու փուս գնում ես, կարծես թէ ուսումնարան ես գնում: Մի տես, ի՞նչ ուրախութիւն է անտառում...»:

Էստեղ գլուխը վեր է քաշում կարմրիկը, չորս կողմն աչք ածում, տեսնում է ծառերի տերենների արանքից էստեղ էնտեղ ներս են թափանցում ու խաղում են արեի շողերը, իսկ կանաչ խոտի մէջ ցրիւ բարձրանում են գոյնզգոյն անհամար ծաղիկները: Մտքումն ասում է՝

— Տատի համար որ մի փունջ ծաղիկ էլ տանեմ, հօշատ կուրախանայ: Դեռ ժամանակ էլ կայ, կը հասնեմ...»:

Ասում է, ճամփից դուրս է գալիս անտառն ընկնում ու սկսում ծաղիկ քաղել: Մինը պոկում է, տեսնում է նրա կողքին աւելի գեղեցիկն է ծաղկում, հիմի էլ էն կողմն է վազում. էսպիսով էլ աւելի ու աւելի հեռու, անտառի խորքն է մտնում:

Իսկ էս ժամանակ գէլը կարճ ճամփով տատի տունն է հասնում ու դուռը ծեծում:

— Էղ ո՞վ է:

— Կարմրիկն եմ, քեզ համար գինի ու գաթայ եմ բերել, դուռը բաց արա:

— Դուռն փակիչին հուպ տուր, կը բացւի, ներսից ձէն է տալիս տատը: Ես թոյլ եմ, չեմ կարող վեր կենալ:

Գէլը դուռն փակիչին հուպ է տալիս, դուռը ետ է բացւում: Լուռ յարձակում է անկողնի վրայ ու պառաւին ողջող կուլ տալիս: Յետոյ նրա շորերը հագնում է, նրա գլխակապիչը կապում, անկողնում պառկում ու վերմակը քաշում վրէն:

Իսկ կարմրիկն էնտեղ մի ծաղկից միւս ծաղիկն է վազում, ու երբ որ էնքան շատ շատ ծաղիկ է քաշում, որ տեսնում է էլ չի կարող տանի, նոր տատը միտն է ընկնում. դարձեալ ընկնում է ճամփին, վազում դէպի տատի տունը:

Որ հասնում է տատի տունը՝ զարմանում է, թէ դուռն  
ինչու է կրընկի վրայ բաց:

Ներս է մտնում, սիրտը մի վախ է ընկնում: Ասում է՝  
«Տէր Աստւած, միշտ իմ տատի մօտ էնպէս լաւ էր, էսօր ին-  
չու եմ էսպէս վախենում...»: Մտքումն էսպէս է ասում ու  
ձէն է տալիս.

— Բարի լուս, տատի ջան:

Պատասխան չը կայ: Մօտենում է տատի անկողնին, վեր-  
մակը ետ է քաշում: Տեսնում է տատը պառկած է, բայց չի  
իմանում ինչու—գլխակապիչը ներքեւ է քաշել ու էնպէս  
տարօրինակ է նայում, որ...

— Վայ, ասում է, տատի, էդ ինչ ահագին ականջներ  
ունես...

— Էս նրա համար է՝ որ քեզ լաւ լսեմ, բալիկս...

— Վայ, տատի, էդ ինչ ահագին աչքեր ունես...

— Էս նրա համար է՝ որ քեզ լաւ տեսնեմ, բալիկս...

— Վայ, տատի, էդ ինչ ահագին ձեռներ ունես...

— Էս նրա համար է, որ քեզ աւելի լաւ գրկեմ, բա-  
լիկս...

— Բայց, տատի, էդ ինչ սարսափելի մեծ բերան ու-  
նես...

— Իսկ էս նրա համար է, որ քեզ շուտով ուտեմ...»:

Ասում է գէլն ու տեղիցը ներքեւ թոշում, ձեռաց կուլ  
տալիս խեղճ կարմրիկին:

Սրան էլ կուլ է տալիս, կշտանում է ու նորից անկող-  
նում պառկում, խոմփացնելով քնում: Հէնց էս ժամանակ,  
դու մի ասիլ, մի որսկան էդ պառաւի տան մօտիցն անց է  
կենում: Ասում է.

— Էս պառաւն ինչու է էսպէս խոմփացնում, մի տես-  
նեմ, չը լինի թէ հետը բան է պատահել...

Ներս է մտնում, մահճակալին մօտենում, տեսնում է  
պառաւի տեղը պառկած գէլը:



— Հը, վերջապէս ճանկս ընկար, անիծւած, վաղուց էլ քեզ ման գալիս:

Ասում է որսկանն ու մին ուզում է հրացանով զարկի, մին էլ մտածում է, թէ կարելի է պառաւին կուլ է տւել ու կարելի է դեռ նրան փրկել: Ել հրացանով չի զարկում, դանակն առնում է ու սկսում է փորը ճղել: Մի քիչ ճղում է թէ չէ՝ մի կարմիր գլխարկ է երեսում, մի քիչ էլ ճղում է— կարմրիկը կենդանի-կենդանի դուրս է թռչում ու կանչում.

— Վայ, ինչքան վախեցայ... ինչ մութն էր զիլի փորումը...»:

Նրա ետևից էլ տատն է դուրս գալիս, նա էլ էր դեռ կենդանի, բայց դժար էր շունչը քաշում:

Էստեղ կարմրիկը շտապով մեծ մեծ քարեր է հաւաքում, էն քարերով բերում են զիլի փորը լցնում: Գէլը զարթնում է, ուզում է տեղիցը թռչի, դուրս վախչի, բայց քարերից էնքան ծանրացել էր, որ տեղն ու տեղը վեր է ընկնում, գետնովը դիպչում, սատկում:

Ամենքն էլ էնպէս ուրախանում են, էնպէս ուրախանում են, որ էլ լեզով ասել չի լինիլ: Որսկանը զիլի մորթին պոկում է, վեր կախում գնում, պառաւը նստում է, սկսում է կարմրիկի բերած գաթէն ուտել, գինին խմել ու քիշ-քիչ ուժի գալ, իսկ կարմրիկը մտածում է.

— Զէ, էս մինը բաւական էր, էլ երբէք ճամփից դուրս չեմ գալ ու մենակ անտառն ընկնիլ, երբ որ մայրիկը չի թողնում»:

Ասում են սրանից ետը՝ մի անգամ էլ կարմրիկը երբ որ իր տատի համար թխւածք է եղել տանելիս, մի ուրիշ գէլ է ուզեցել նրան համոզի, որ ճամփիցը դուրս գայ: Բայց կարմրիկն զգուշացել է ու իր ճամփէն է գնացել: Երբ որ տատի մօտ է հասել՝ պատմել է, թէ հապա՝ էսպէս մի գէլ պատահեց ինձ ճամփին, բարեկց, բայց էնպէս չար աշքով էր նայում, որ թէ ճամփի մէջ չը լինէինք, հաւատա, թէ ինձ ուտէր...»: Տատն ասել է.

— Վայ, կարմրիկ ջան, կաց դուռը փակենք, որ չը լինի թէ էղ գէլը գայ յանկարծ:

Մի քիչ կենում են, տեսնում են գէլը դուռը ծեծում է ու ձէն է տալիս.

— Տատի, դուռը բաց արա, ես կարմրիկն եմ, քեզ համար գաթայ եմ բերել...»:

Տատն ու կարմրիկը ոչ պատասխան են տալիս, ոչ դուռը բաց են անում: Մրանից ետը գէլը մի քանի անգամ էլ տան չորս կողմովը պատյա է գալիս ու բարձրանում կտուրը: Էնտեղ սպասում է, թէ երբ պէտք է իրիկունը կարմրիկը դուրս գայ իրենց տունը գնալու, որ բռնի ուտի: Տատը գլխի է ընկնում նրա մտքինը:

Դուանը, հէնց տան պատի տակին մի մեծ կօթ է լինում ջրով, կարմրիկին ասում է.

— Կարմրիկ ջան, էստեղ մսի խաշու (եփած մսի ջուր) կայ, վեր կալ էս խաշուն տար ածա կօթի մէջը:

Կարմրիկը մսի խաշուն տանում է ածում դռան մեծ կօթի մէջը, էնքան, որ կօթը պողնգէ պոռնգ լցւում է:

Էս խաշւի հոտը վեր է բարձրանում ընկնում զիլի քիթը: Գէլը փնչացնում է, վերեկց սկսում է ծիկլակել, թաքուն նայել գէպի ներքե, վիզը ձգնւմ է, ձգնւմ է, էնքան ձգնւմ է, որ էլ չի կարողանում իրան պահի, թրըմփ, ընկնում է ուղիղ կօթի մէջը՝ խեղդում: Կարմրիկն էլ ուրախ-ուրախ վեր է կենում գնում իրենց տունը, էն է լինում էն, էլ ճամփին ոչ ձեռք չի տալիս նրան:



## Մ Ո Խ Ր Ո Տ Ը

Մի հարուստ մարդու կին հիւանդանում է։ Տեսնում է մահը մօտենում է՝ կանչում է իր մինուճար աղջկանը, առում է։

—Զաւակս, եղիք լաւն ու բարի, էն ժամանակ Աստւած միշտ քեզ կըլսի, ես էլ երկնքից մտիկ կանեմ քեզ ու անբաժան քեզ հետ կը լինեմ։»

Ասում է ու արել ապրողներին բաշխում, մեռնում։ Աղջկն ամեն օր գնում է մօր գերեզմանի վրայ լաց լինում և մնում է միշտ լաւն ու բարի։

Զմեռը գալիս է, ձիւնը սիպտակ սաւանով ծածկում է մօր գերեզմանը, իսկ գարնան արել շողալուն պէս հէրը ետնակին է ուզում, աղջկայ համար խորթ մէր է բերում։ Խորթ մէրն էլ իրեն հետ երկու աղջիկ է բերում, դրսից սիրուն ու սիպտակ, ներսից չար ու սեահոգի։ Ու խորթ աղջկայ համար սկսում են սև օրերը։

—Միթէ էս կունկուռն էլ մեզ հետ միասին պէտք է տանը պարապ սարապ նստի։ Ով ուզում է հաց ուտի—պէտք է աշխատի։ Ասում են խորթ քոյրերն ու տանիցը դուրս են անում, քշում խոհանոցը։ Լաւ շորերն ու կօշիկները հագիցը հանում են, հին գուրչեր ու փէտէ ոտնամաններ են հագցընում։ ծափ են տալիս՝ վրէն ծիծաղում։—Մի էս իշխանուհուս մտիկ արէք է, տեսէք՝ ոնց է զուգւել, զարդարւել...։

Խեղճ աղջիկը առաւօտից մինչեւ իրիկուն պէտք է խոհանոցում չարչարւէր։ Առաւօտը ծէքին պէտք է վեր կենար ջուր կրէր, կրակ անէր, կարէր, կարկատէր, եփէր, թափէր։ Խորթ

քոյրերն էլ շարունակ նրան վշտացնում էին ու վիրաւորում, ծաղրում էին, լնտրած ոսպն ու սիսեռը շաղ էին տալիս, մոխիրն էին ածում, ու նա նորից պէտք է նստէր հատիկ հատիկ հաւաքէր։

Իրիկուններն էլ երբ որ բանը վերջացնում էր, անկողին չունէր, կրակի առաջին՝ մոխրի վրայ էր պառկում։ Դրանից էլ միշտ մոխրոտ էր լինում ու դրա համար էլ քոյրերը աւել անունը դրին Մոխրոտ։

Մի անգամ էս Մոխրոտի հէրը, ուրիշ տեղ գնալիս խորթ աղջիկներին հարցնում է՝ թէ ի՞նչ էք ուզում, որ ձեզ համար բերեմ։ Մինն ասում է. — «ինձ համար սիրուն շորեր բեր։» Միւսն էլ թէ—«ինձ համար մարգարտէ մանեակ բեր։»

— իսկ զու, Մոխրոտ ջան, դժու ինչ կուզես, որ քեզ համար բերեմ։

Մոխրոտն էլ ասում է. — հայրիկ, էս ծառի ձիւղը, որ վերադարձիդ կըդիպչի քո գլխարկին, էս ձիւղը կտրի ու բերինձ համար։»

Հէրը գնում է, խորթ աղջիկների համար լաւ շորեր է առնում, մարգարտէ մանեակ ու թանկագին քարեր է առնում ու ճամփայ ընկնում գէպի առուն։ Վերադարձին մի ծմակով անց կենալիս մի ընկուզենու ձիւղ դիպչում է գլխարկին՝ գըլշարկը վէր գցում։ Էն ձիւղն էլ կտրում է հետը վերցնում, որ Մոխրոտին տայ։ Տուն է համնում, խորթ աղջիկների ուղածն իրենց է տալիս, ընկուզենու ձիւղն էլ տալիս է Մոխրոտին։ Մոխրոտը շնորհակալ է լինում հօրից, տանում է էն ընկուզենու ձիւղը մօր գերեզմանի վրայ տնկում ու լաց է լինում։ Էնքան լաց է լինում, էնքան լաց է լինում, որ արտասուքով էն տնկած ընկուզենու ձիւղը ջրում է։ Ու ընկուզենու ձիւղը դուրս է գալիս, մեծանում, մեծ ծառ է դառնում։

Մոխրոտը օրը երեք անգամ գնում է էս ծառի տակ լաց է լինում ու աղօթք անում։ Ամեն անգամ էլ մի ճերմակ թոշուն գալիս է էս ծառին վէր գալիս ու՝ Մոխրոտն ինչ որ սրտով ուզում է, էս սրտով ուզածը վերեկից գցում է ներքեւ։

Մի անգամ էլ թագաւորը մի հանդէս է սարքում, որ  
երեք օր, երեք գիշեր պէտք է քաշէր: Իր տէրութեան բոլոր  
գեղեցիկ աղջիկներին հրաւիրում, հաւաքում է էն հանդէսին,  
որ իր տղէն նրանց միջիցը իրեն համար հարսնացու ընտրի:  
Խորթ ըոյրերը, որ իմանում են իրենք էլ են հրաւիրած,  
ուրախանում, աշխարհքով մին են լինում, Մոխրոտին ձէն  
են տալիս.—Արի, Մոխրոտ, արի մեր մազերը սանրի, մեր կօ-  
շիկները սրի, մեր կոճակները մէր գցի, գնում ենք թագա-  
ւորի պալատը խնջոյքի:»

Ինչ որ ասում են ամեն բան Մոխրոտը կատարում է,  
բայց սիրտն ուզում է, որ ինքն էլ պար գայ, ինքն էլ ուրա-  
խանայ, խորթ մօրը խնդրում է, որ իրեն էլ հետները տա-  
նեն պալատը:

—Ծ'ն, հողեմ գլուխդ, ճշում է խորթ մէրը, ակաս-մակաս՝  
էդ մոխրոտ տեղովդ հէնց դու էիր պակաս թագաւորի պալա-  
տում: Ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, դու  
էլ ես ուզում պալատումը պար գաս, տօ Մոխրոտ:»

Դեռ էդպէս խնդիրքը մերժում է՝ վերջն ասում է.

— Դէ լաւ. մի աման ոսպ եմ ածել մոխրը, երկու ժա-  
մումը թէ կը ջոկես՝ հետներս քեզ էլ կըտանենք, թէ չէ հօ-  
չենք տանիլ:

Մոխրոտն էս լսում է թէ չէ՝ ետեի դոնիցը զուրս է  
թոչում պարտէզն ու կանչում.

«Իմ ընկերներ, աղունակներ,  
երկրնքի տակ թոչող հաւքեր,  
Թըոէք, եկէք ամեն կողմից,  
Վեր քաղեցէք ոսպը մոխրից.  
Լաւն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,  
Իմ ընկերներ, թըոչուն հաւքեր:»

Էս ասելն է լինում: Մին էլ էն է տեսնում խոհանոցի  
լուսամուտից երկու ճերմակ աղաւնի ներս ընկան, նրանց ե-  
տեից տարակները, տարակների ետևից էլ մնացած թըո-  
չունները: Ծլըլալով իջնում են ուղիղ մոխրի վրայ ու, կըտ-

կըտ, կտուցներով սկսում են  
ոսպը մոխրից վեր քաղել  
վատերն ուտել, լաւերն ածել  
ամանի մէջ: Մի ժամ էլ չի  
քաշում՝ բոլոր ոսպը ջոկում,  
հաւաքում են, ետ թոչում  
գնում: Մոխրոտը ամանը առ-  
նում է ուրախ ուրախ տա-  
նում տալիս խորթ մօրը,



ասում է հիմի ինձ էլ հետը կը տանի: Խորթ մէրն ասում է. — Զէ, չեմ տանիլ, ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման. ի՞նչպէս պէտք է պալատումը պար գաս: Դու խաղք ու խայտառակ կը լինես, մենք էլ քեզ հետ:»

Մոխրոտը լաց է լինում: Էն ժամանակ խորթ մէրն ասում է.

— Դէ լաւ՝ երկու աման ոսպը մի ժամում թէ մոխրիցը ջոկեցիր՝ հետներս կը տանենք, թէ չէ՝ հօ չէ: Մաքումն էլ ասում է՝ «Էս հօ իսկի չի կարող անի:»

Երկու աման ոսպն ածում է մոխրիրը, իսկ Մոխրոտը ետեի դոնից պարտէզն է վազում:

«Իմ ընկերներ, աղունակներ,  
Երկընքի տակ թըռչող հաւքեր,  
Թըռէք, եկէք ամեն կողմից,  
Վեր քաղեցէք ոսպը մոխրից.  
Լաւն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,  
Իմ ընկերներ, թըռչուն հաւքեր:»

Կանչում է թէ չէ՝ խոհանոցի լուսամուտից թըրթըռալով երկու ձերմակ աղաւնի են ներս ընկնում, նրանց ետևից տատրակները, տատրակների ետևից էլ միացած թուշունները: Ծըլւըլալով իջնում են մոխրի վրայ ու կը-տ-կը-տ, կտուցներով սկսում են ոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լաւերն ածել ամանի մէջ: Մի ժամ էլ չի քաշում, բոլոր ոսպը ջոկում, հաւաքում են, ետ թուչում գնում: Մոխրոտը ամանն առնում է, ուրախ ուրախ տանում է տալիս խորթ մօրը, ասում է հիմի անպատճառ ինձ էլ կը տանի հետը: Խորթ մէրն ասում է. — Ի՞նչ ուզում ես արա, մին է, քեզ հետներս չենք տանելու. ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, ի՞նչ պէս պէտք է պալատում պար գաս: Դու խաղք ու խայտառակ կը լինես, մենք էլ քեզ հետ:» Ասում է, երեսը շուռ տալիս, իր երկու գոռող աղջիկներին առնում գնում:

Մոխրոտը տանը մնում է մեն մենակ: Վեր է կենում

գնում մօր գերեզմանի վրայ, ընկուղենու տակին կանգնում ու կանչում.

«Ժաժ եկ, իմ ծառ, ձըգիր զառ վառ

Ոսկի. արծաթ շոր ինձ համար:»

Կանչում է թէ չէ՝ ձերմակ թուչնակը ծառի վրիցը ունկեկար ու արծաթակար մի ձեռք շոր ու ոտնամաններ է գըցում ներքեւ: Մոխրոտն իսկոյն հագնում է ու շտապում պալատը: Արծաթակար ու ոսկեկար զգեստը հագին՝ էնքան գեղեցիկ է լինում, որ խորթ մէրն ու քոյրերը չեն ճանաչում: Ասում են՝ ով գիտի ինչ թագաւորի աղջիկ է: Մոխրոտն իսկի մտքներով անց էլ չի կենում. ասում են հիմի նա, տանը նստած, կեղտոտ-կեղտոտ՝ մոխրիցը ոսպն է ջոկում:

Թագաւորի տղէն որ տեսնում է, իսկոյն դէմն է գալիս, ձեռիցը բռնում է, հետը պար է գալիս, ու էլ ձեռը ձեռիցը բաց չի թողնում:

Էսպէս մինչև իրիկուն պար է գալիս, իրիկունն էլ, որ ուզում է տուն գնայ՝ թագաւորի տղէն ասում է.

— Ես քեզ ճանապարհ կը դնեմ:

Շատ է ուզում իմանայ, թէ ով է էն գեղեցկուհին, ի՞նչ տանից է, ում աղջիկն է: Բայց ճամփին Մոխրոտը յանկարծ թուչում է, մտնում իր հօր աղաւնոցը, կորչում: Թագաւորի տղէն սպասում է, մինչև որ Մոխրոտի հէրը գալիս է: Ասում է՝ էն անծանօթ գեղեցկուհին քո աղաւնոցը մտաւ:

Ծերունին միտք է անում. — Զը լինի թէ մեր Մոխրոտն է էս գեղեցկուհին...»:

Աղաւնոցը քանդում են, տակն ու վրայ են անում, ոչ Մոխրոտ կայ, ոչ ուրիշ ոքմին:

Դու մի ասիլ, Մոխրոտը մի կողմից աղաւնոցի գլուխն է բարձրացել, միւս կողմից ներքեւ թռել ու մի ակնթարթում ընկուղենու տակ կանգնել: Էնտեղ իր ճոխ զգեստները հանել է դրել մօր գերեզմանի վրայ ու թուչնակը ետ է տարել, իսկ ինքը վազել է խոհանոց՝ նորից մոխրի վրայ պառկել: Խորթ մէրն ու աղջիկներն էլ գալիս են տեսնում՝ ի՞նչպէս որ

թողել են, էնպէս էլ՝ Մոխրոտը՝ գուրչերը հագին՝ մոխրի վրայ պառկած, կողքին էլ ձիթի ճրագը մխում է:

Միւս օրը հանդէսն էլ ետ նորոգւում է: Հերը, խորթ մէրն ու քոյրերը դարձեալ նոր շորեր են հագնում ու գնում, իսկ Մոխրոտը շտապում է իր ընկուզենու տակն ու կանչում.

Ժաժ եկ, իմ ծառ, ձըգիր զառ վառ

Ուկի-արծաթ շոր ինձ համար:

Ճերմակ թոչնակը առաջւանից աւելի գեղեցիկ մի ձեռք շոր է գցում ներքեւ: Էս շորերը հագին Մոխրոտը որ չի յայտնուում խնջոյքնւմ՝ շափաղը պալատի պատերովն է տալիս, հանդիսականները մնում են բերանները բաց: Դու մի ասիլ թագաւորի տղի աշքն էլ հէսց ճամփին է լինում: Տեսնում է թէ չէ՝ դէմն է վազում, ձեռիցը բռնում է տանում ու միմիայն նրա հետ է պարում շարունակ: Ուրիշ պարեկներ էլ որ մօտենում են, ասում է՝ չէ, իմ պարընկերը սա է, միայն սրա հետ պէտք է ես պար գամ:

Էլ ետ մութը որ ընկնում է՝ աղջիկն ուզում է գնայ իշենց տունը: Թագաւորի տղէն ետեիցը գնում է, որ աչքով պահի, տեսնի թէ ում տունն է մանում: Մոխրոտը վազում է ընկնում իշենց տան ետեի պարտէզը: Պարտէզում մի տանձենի է լինում, լիքը հասած, հրաշալի տանձերով: Սկիւռի նման ճարպիկ էն ծառն է բարձրանում ու ճիւղերի արանքում էնպէս է կորչում, որ թագաւորի տղէն չի էլ կարողանում նկատի, թէ որտեղ թաքնւեց: Ապասում է, մինչև Մոխրոտի հէրը գալիս է: Ասում է.

— Էն անծանօթ աղջիկը էլ ետ աչքիցս թոաւ ու, կարծես թէ՝ էս ձեր տանձենուն բարձրացաւ...»:

Հերը միտք է անում.— Զը լինի թէ էս մեր Մոխրոտն է...»:

Հրամայում է, կացինը բերում են տանձենին կտրում են՝ վրէն ոչ ոք չը կայ: Մտնում են խոհանոցը. տեսնում են, ինչպէս միշտ, դարձեալ մոխրի վրայ պառկած է, դու մի ասիլ ծառի մի կողմից բարձրացել է՝ միւս կողմից իջել,

լաւ շորերը տարել է տւել թոչնակին, հին գուրչը հագել ու էլ ետ եկել մոխրի վրայ պառկել:

Երբորդ անգամն են տանըցիք գնում խնջոյք: Մոխրոտն էլ երբորդ անգամ վազում է մօր գերեզմանի վրայ, իր ընկուզենու տակ կանգնում ու կանչում.

— Ժաժ եկ, իմ ծառ, ձըգիր զառ վառ

Ուկի-արծաթ շոր ինձ համար:»

Էս անգամ ճերմակ թոչնակը մի էն տեսակ ճոխ ու շքեղ զգեստ է գցում ներքեւ, որ աշխարհքում հողեղէն մարդը ոչ ունեցել է, ոչ կունենայ. իսկ ոտնամանները՝ զուտ ոսկուց:

Էս զգեստը հագին, զուքւած-զարդարւած որ հանդիսի մէջ դուրս է գալիս՝ ամենքն էլ արմանքից ու զարմանքից քշում, վերանում են: Իսկ թագաւորի տղէն սկսում է հետը պարել, շարունակ պարել, ով որ էլ մօտենում է, ասում է.


— Զէ, մենակ ես պէտք է պարեմ սրա հետ...»:

Էլ ետ որ մութն ընկնում է՝ Մոխրոտն ուզում է գնայ, թագաւորի տղէն էլ ուզում է ուղեկցի. բայց էնպէս ձեռաց սահում է ու չքանում, որ տղէն չի էլ կարողանում ետեկցը հասնի: Միայն թէ թագաւորի տղէն էս անգամ խորամանկութիւն էր բանեցըրել: Հրամայել էր, որ պալատի սանդուխքները ձիւթեն: Սանդուխքները ձիւթած են լինում ու, շտապիջնելու ժամանակ, աղջկայ ձախ ոտնամանը կպչում է սանդուխքին, մնում:

Թագաւորի տղէն ոտնամանը վերցնում է ու վրէն զարմանում, թէ ինչքան է փոքրիկ ու ինչքան է սիրուն, էն էլ զուտ մաքուր ոսկուց:

Միւս օրը վեր է կենում, ոտնամանն առնում, գնում Մոխրոտի հօր մօտ: Ասում է՝ կայ թէ չըկայ, նա պէտք է լինի իմ կինը, ում ոտին էս ոտնամանը կըգայ:

Խորթ քոյրերը ուրախանում են: Իրենք էլ փոքրիկ, սիրուն ոտներ են ունենում: Մեծ քոյրն իսկոյն խընդմընդալով իր սենեակն է վազում. մէրը կողքին կանգնում է, ինքը ոտնամանը ոտի վրայ փորձում է: Փորձում է, բայց փոքր է



գալիս, ինչ անում է չի անում, մեծ մատը ոչ մի կերպ ներս  
չի գնում: Մէրը դանակը հանում է իրեն է տալիս, ասում է:

— Ա՛ռ, մեծ պճեղը կտրի. վախիլ մի, որ թագուհի  
դառնաս՝ ոտով հօ չես ման գալու: Աղջիկը դանակն առնում  
է մեծ պճեղը կտրում, ոտը կոխում է ոտնամանի մէջ ու,  
մի կերպ ցաւին յաղթելով, դուրս է գալիս թագաւորի տղի  
մօտ:

Թագաւորի տղէն ասում է՝ իմ հարսնացուն սա է, որ  
կայ: Էս աղջկանը գաւակն է առնում՝ ձին քշում: Բայց ճամ-  
փին էն գերեզմանի մօտից անցկենալիս ընկուզենու վրից  
երկու ճերմակ աղաւնի կանչում են.

— Ղմւ, ղմւ, տղայ, չես նըկատում,  
ոնց է ոտից արիւն կաթում.  
փոքր է ոտին ոտնամանը,  
քու հարսնացուն մընաց տանը:»

Էստեղ թագաւորի տղէն մտիկ է անում, տեսնում է աղ-  
ջկայ ոտնամանից արիւնը ծորելով գնում է: Ձիու գլուխը ետ  
է շուռ տալիս, էս աղջկանը ետ է տանում, ասում է սա իմ  
հարսնացուն չի, թող միւս քոյլը փորձի՝ տեսնենք:

Երկրորդ քոյլն է վագում իր սենեակը, որ ոտնամանը  
ոտին փորձի: Պձեղները լաւ են գնում, բայց սրա էլ կըունկն  
է մեծ գուրս գալիս: Մէրը դանակը հանում է իրեն տալիս,  
ասում է.

— Ա՛ռ, կրնկիցդ մի քիչ կտրի, վախիլ մի, որ թագու-  
հի դառնաս՝ ոտով հօ չես ման գալու:

Աղջիկը կրնկից մի քիչ կտրում է, ոտը մի կերպ ոտնա-  
մանի մէջ է կոխում ու, ցաւին զոռելով, դուրս է գալիս թա-  
գաւորի տղի մօտ:

Թագաւորի տղէն ասում է՝ հիմի արդէն գտայ, սա է իմ  
հարսնացուն, որ կայ: Ձին նստում է, աղջկանը գաւակն է առ-  
նում ու քշում:

Գերեզմանի կողքից անց կենալիս ընկուզենու վրից էն  
երկու աղունակներն էլ ետ կանչում են.

ՂՌւ, ղՌւ, տղայ, չես նկատում,  
ոնց է ոտից արիւն կաթում.  
փոքր է ոտին ոտնամանը,  
քու հարսնացուն մընաց տանը:

Թագաւորի տղէն մտիկ է անում տեսնում՝ արիւնը դուրս  
է ծորում աղջկայ սպիտակ գուլպաների տակից ու ոտնամա-  
նից կաթկթում։ Զիու գլուխը ետ է շուռ տալիս, կեղծ հարս-  
նացուին էլ ետ բերում իրենց տունը։ Ասում է.

— «Սա էլ չի իմ իսկական հարսնացուն։ Դուք էլ ուրիշ  
աղջիկ չունէք...»

Հէրն ասում է. — «Զէ, էլ ուրիշ աղջիկ չունենք։ Ճշմա-  
րիտ է, իմ առաջւայ կնկայ մահից յետոյ մի փոքրիկ աղջիկ  
մնաց, որ մենք Մոխրոտ ենք ասում, բայց դէ նա ձեզ վայել  
հարսնացու չի. որտեղից որտեղ...»

Թագաւորի տղէն ուզում է անպատճառ Մոխրոտին տեսնի։  
— Զէ, աման, ասում է խորթ մէրը. նա էնպէս կեղաստ  
է, որ վրէն մտիկ անել չի լինիլ։»

Բայց թագաւորի տղէն կանգնում է, թէ ինչ ուզում է  
լինի՝ պէտք է տեսնեմ, ու ձէն է տալիս, Մոխրոտին կանչում։

Մոխրոտը, երեսն ու ձեռները շարմաղ լւացած, դուրս է  
գալիս՝ գլուխ տալիս թագաւորի տղին։ Սա էլ ոսկէ ոտնա-  
մանը նրան է տալիս, որ ոտին չափի։

Տեղն ու տեղը նստարանի վրայ նստում է, փէտէ կո-  
պիտ ոտնամանները հանում, ոսկի ոտնամանը հագնում։ Էն-  
պէս է ոտին գալիս, ոնց որ հալած-թափած։ Որ ոտի է կանգ-  
նում ու ժպտալով թագաւորի տղի աչքերի մէջը նայում, թա-  
գաւորի տղէն յանկարծ ճանաչում է, տեսնում է՝ սա հէնց  
էն գեղեցկուին է, որի հետ ինքը պարում էր ու որին ման  
է գալիս։


— Ահա, ասում է, վերջապէս գտայ իմ իսկական հարս-  
նացուն։

Խորթ մէրն ու իր աղջիկները վախից վեր են թոչում,  
նախանձից ու ցաւից էն քաթանի պէս գունատուում։ Թագա-


ւորի տղէն իր ձին հեծնում է, Մոխրոտին գաւակն առնում ու  
թոչում դէպի իր պալատը։ Մոխրոտի մօր գերեզմանի մօտից  
անցնելիս՝ ընկուղենու վրից էն երկու ճերմակ աղունակները  
մնչում են.

— «ՂՌւ, ղՌւ, տղայ, չես նըկատում,  
էլ արիւն չի ոտից կաթում.  
Ոտնամանը ոտինն է բուն,  
Բարով տանես քո հարսնացուն։»

Էսպէս մնչում են, յետոյ ցած են թոչում, մինը Մոխրո-  
տի աջ ուսին է բազմում, միւսը ձախ ուսին։ Ու էղպէս էլ  
մնում են։



Հարսանիքի ժամանակ Մոխրոտի խորթ քոյրերն էլ են  
գալիս, որ իրենց վրայ էլ կաթի նրա բախտիցը ու իբրև թէ  
ուրախանում են։ Պսակ գնալիս մեծը Մոխրոտի աջ կողմն է  
կանգնում, փոքրը ձախ կողմը, ու աղունակները մեծի աջ  
աչքն են հանում, փոքրի ձախ աչքը։ Պսակից ետ գալիս մեծը  
ձախ կողմն է անցնում, փոքրը աջ կողմը։ Էս անգամ էլ ա-  
ղունակները մեծի ձախ աչքն են հանում, փոքրի աջ աչքը,  
ու թողնում։ Ու էսպէս, երկուսն էլ իրենց չարութիւնից կու-  
րանում են, ու ամբողջ իրենց կեանքում էլ մնում են կոյր-  
ը



## ՃԵՐՄԱԿ 02

Մեղանից շատ առաջ մի իմաստուն թագաւոր է լինում: Ոչ մի բան չի մնում նրանից ծածուկ. ամենազդղանի բաների մասին էլ կարծես թէ քամին նրան տեղեկութիւն էր տալիս: Էս թագաւորը մի տարօրինակ սովորութիւն է ունենում. ամեն ճաշի, երբ սեղանը վեր են քաղում, ծառան մի ծածկած աման է ներս բերում, ու թագաւորը ամանը բաց չի անում, մինչև որ ծառան էլ չի գնում ու ինքը չի մնում մեն-մենակ:

Էսպէս քաշում է բաւական ժամանակ: Մի անդամ էլ էս տանող ծառային էնպէս մի հետաքրքրութիւն է տիրում, որ էլ չի կարողանում ինքն իրեն դիմադրի, ամանը առնում է տանում իրեն սենեակը: Սենեակի դուռն զգոյշ դնում է, ամանի խուփը ետ քաշում: Տեսնում է միջին մի եփած ձերմակ օձ: Էլ չի կարենում իրեն պահի, մի կտոր կտրում է դընում բերանը: Լեզւին է տալիս թէ չէ—յանկարծ պատուհանի տակիցը մի գւարթ ղըժվածոց է լսում: Ականջ է դնում, տեսնում է ճնճղուկներ են, զրոյց են անում, զանազան պատմու-



թիւններ են պատմում անտառներից ու դաշտերից:

Դու մի՛ ասիլ էս մեր ծառան օձի միմն ուտելուն պէս կենդանիների լեզուն հասկանալու շնորհք է ստացել:

Էնպէս է պատահում, որ հէնց էդ ժամանակ թագուհու հրաշալի մատանին կորչում է ու կասկածն ընկնում է էս նոյն հաւատարիմ ծառայի վրայ, որ ամեն տեղ ազատ ել ու մուտք ունէր: Ասում են՝ կայ չը կայ՝ սա է գողացել մատանին:

Թագաւորը ծառային կանչում է իր մօտ, սպառնում, որ եթէ մինչեւ միւս օրը գողի անունը չը տայ՝ գլուխը կը թռչի: Էս ծառան ինչքան երգում կրակն է ընկնում, թէ ինքն անմեղ է՝ բան չի դառնում: Էնպէս սպառնալիքով էլ բաց է թողնում ու մինչեւ միւս օրը ժամանակ է տալիս:

Ահ ու դողով խեղճը բակն է իջնում, միտք է անում, թէ ինչ անի, որ պըճնի էս փորձանքից:

Գնում է տեսնում բաղերը բակում ջրափին հաւաքւած իրար կողք կտրած հանգստանում են: Տափակ կտուցներով մաքրում են փետուրներն ու մի հետաքրքրական զրոյց են անում: Պատմում են, թէ էսօր որը որտեղ է որոնել առաւուը ու ինչ համով կեր է գտել իր համար: Մինը վեր է կալնում թէ.

— Իսկ ես ագահի նման կուլ տւի թագուհու մատանին, որ պատուհանի տակ ընկած էր, զըանից ստամոքս մի տեսակ ծանր է, ճնշում է...»

Ծառան տեղն ու տեղը վրայ է թռչում էս ասող բաղի վկիցը բոնում, վազում խոհանոց: Խոհարարին ասում է.

— Հապա մի էս բաղը մորթի... բաւական գերացել է...»


— Հա, ձիշտ ես ասում, պատասխանում է խոհարարը, ձեռքին ծանր ու թեթև անելով, ուտելու համար բաւական նեղութիւն է տւել իրեն: Խորոված անելու ժամանակն է:»

Ասում է ու վիզը թոցնում: Փորն խստակելիս—ընը՝ դուրս է գալիս թագուհու կրած մատանին:

Իհարկէ սրանով էլ պարզում է հաւատարիմ ծառայի անմեղութիւնը: Բայց որովհետեւ թագաւորն էլ ուզում էր իր

մեղը մի տեսակ քաւի, առաջարկում է նրան մի բան խնդրի, ինչ որ սիրտը կուզի: Խոստանում է պալատական ինչ պաշտօն էլ ուզի՝ տայ:

Ծառան հրաժարում է ամեն պատւից ու պաշտօնից, միայն խնդրում է, որ իրեն մի ձի տայ, մի քիչ ծախսի փող,



և ազատութիւն, որ գնայ ճանապարհորդի, աշխարհք տեսնի, թագաւորը համաձայնուում է. ձի էլ է տալիս, ճամփու ծախս էլ. ու մեր ծառան ճանապարհ է ընկնում գնում: Գնում է, գնում, շատ է գնում թէ քիչ, էդ էլ Աստւած

գիտի. մի ջրի ափից անց կենալիս տեսնում է երեք ձուկը, ոնց է եղել, ընկել են ափի ծանծաղուտը, եղէգնուատի մէջ թրպրտում են ու անջուր տանջուում: Թէկուզ և ասած է «անխօս ձուկը», սակայն մեր հերոսը պարզ լսում է, թէ իրեն տեսնելուն պէս ինչպէս են խօսում էն ձկներն ու գանգատուում իրենց դառը վախճանի վրայ:

Էս որ լսում է, մեղը գալիս է: Զիուց իջնում է, սրանց վեր առնում ետ ածում ջուրը: Խեղճ կենդանիները ուրախ-ուրախ սուզւում են ջրի տակը, ապա գլխիկները գուրս են հանում ու կանչում. «Մենք քու արած լաւութիւնը չենք մոռանալ, ազնիւ տղայ. երբ և իցէ մի օր էլ մենք քեզ պէտքը կը գանք»:

Երիտասարդը էստեղից վեր է կենում գնում: Մի քիչ գնում է, մին էլ թւում է թէ հէնց իրեն ոտների տակից մի բարակ, նւազ ձէն է գալիս: Ներքեւ է նայում, տեսնում է մրջիւների մի բազմութիւն է ղըժվըժում զետնի վրայ, ականջ է դնում, որ խեղճերը սարսափած լաց են լինում ու էսպէս խօսում.

— Ա՞ս, ինչ կը լինէր, որ էս մարդիկ ու կոպիտ կենդանիները մեզնից հեռու ման գային: Հիմի էս յիմար ձին, առանց ափսոսալու, իր ծանր սմբակներով կը կոխկըրտի իմ մարդկանց ու մեր բնակարանները:

Երիտասարդի մեղքն եկաւ: Զիուց գլուխը ծոեց դէպի կողքի շաւիղը, իսկ մրջիւների թագաւորը ետևից կանչեց. «Շնորհակալ եմ, բարի հոգի: Թէ Աստւած կը տայ, քո պարտքի տակ չենք մնալ մենք»:

Էն նեղ շաւիղն էլ, որ բռնում է տղէն, դէպի անտառն էր տանում: Անտառն է մտնում տեսնում է երկու պառաւ ագռաւ իրենց ճուտերին բներից ներքեւ են թափում ու կուռում են.

— «Հէնց միշտ հօ մենք չենք ձեզ կերակրելու: Գնացէք ձեզ համար կեր ճարեցէք, ապրեցէք»: Թշւառ ճուտերը խոտերի մէջ թափւած, թևերին են անում ու խղճալի ճւճուում.

— «Մենք խեղճ ճուտեր, փոքրիկ ձագեր,  
Ուրտից գտնենք մեզ տեղ ու կեր,  
Ոչ թե ունենք, ոչ բուն ունենք,  
Մենք մւր գնանք, մենք ի՞նչ անենք...»:

Երիտասարդի մեղքը գալիս է. առանց երկար ու բարակ մտածելու ունեցած չունեցած հացը հանում է, տալիս ագուաւի ճուտերին որ ուտեն: «Շնորհակալ ենք, կանչում են ագուաւի ճուտերը: Քո արած լաւութիւնը մի օր ետ կը վճարենք»:

Ու վեր է կենում երիտասարդը էստեղից ճամփայ ընկնում գնում: Գնում է, գնում, հասնում է մի մեծ քաղաք: Տեսնում է էս քաղաքում ժողովուրդն իրարով է անցել, լցւել փողոցները. մի անասելի-անպատմելի աղմուկաղակ, հարա-հրոց: Մինն էլ ձի նստած փողոցէ փողոց անց է կենում ու կանչում.

— Թագաւորի աղջիկը իրեն համար փեսացու է ընտրում: Ով ուզում է նրա փեսան դառնայ - մի դժար գործ պէտք է կատարի, թէ կատարեց—լաւ, թէ չէ հօ զլուխը կը թոշի»:

Շատերն էին փորձել թագաւորի աղջկայ առաջարկը կատարելու, միայն իրենց կեանքն էին զուր խորտակել: Բայց մեր երիտասարդը հէնց թագաւորի աղջկանը տեսնում է թէ չէ՝ էնպէս է խելքը կորցնում նրա գեղեցկութիւնից, որ ամեն փորձանք ու ամեն վտանգ մտքիցը հանում է, զլխիցը ձեռք է քաշում, ներկայանում թագաւորին — թէ քո աղջիկը ուզում եմ:

Էստեղից թագաւորի հրամանով տղին տանում են ծովի ափը ու մի ոսկի մատանի գցում ծովի մէջ: Թագաւորն ասում է.

— Էս մատանին պէտք է ծովի անդունդից հանես: Թէ հանեցիր, հօ իմ աղջիկը քոնն է, թէ չէ առանց մատանի լուս աշխարհք դուրս եկար, նորից կը գցեն ծովը, մինչև որ կամ հանես կամ խեղդես»:

Ամենքը ափսոսում են գեղեցիկ երիտասարդին, որ մենակ կանգնած էր ծովի ափին: Ու ծովափին կանգնած նա


միտք է անում, թէ ինչ անեմ, Տէր-Աստւած: Հէնց էս ժամանակ տեսնում է ալիքների մէջ երեք ճուկը լողում են դէպի իրեն. էն երեք ճուկը, որոնց կեանքը ինքը փրկել էր մի ժամանակ: Մէջ տեղի ճուկը բերանում բռնած մի խեցի է բերում. բերում է, բերում, դնում երիտասարդի առաջին:



Երիտասարդը վերցնում է, տեսնում է ոսկի մատանին մէջը: Ուրախ ուրախ մատանին առնում է տանում տալիս թագաւորին, էն յուսով թէ խոստացած պարգևը պիտի ստանայ: Բայց գոռոզ թագաւորի աղջիկը հէնց որ իմանում է թէ երիտասարդը ծագումով իրեն հաւասարը չի՝ երեսը շուռ է տա-

Ահս ու մի նոր խնդիր առաջարկում։ Իջնում է այգին ու ինքն իր ձեռքով տասը տոպրակ կորեկ շաղ տալիս։ ասում է։

— Մինչև էզուց առաւօտ՝ արեկի ծագումը՝ պէտք է էս կորեկը հաւաքես, էնպէս, որ ոչ մինը չը կորչի։ Թէ հաւաքեցիր հօ լաւ, թէ չէ գլուխութ կը թռչի։



Այգում նստում է ու միտք է անում երիտասարդը, թէ ինչ հնար գործ դնի, որ կարողանայ էս մի առաջարկն էլ գըլուխ բերի։ Ոչ մի ճար ու հնար չի գտնում, ու տիսուր-տըրտում նստած սպասում է թէ հրէս առաւօտը լուսին կըդան կըտանեն գլուխը տալու։

Միտք է անում միտք, մինչև թմրում է, քունը յաղթում է ու էս մտքի մէջ էլ քնում է։ Առաւօտը աչքը բաց է անում՝ որ տասը տոպրակ կորեկ կողքի գիմհար տւած առաջին շարած են, գետնին էլ մի հատ կորեկ չի մնացել։ Դու մի ասիլ էգ գիշեր մըջիւնների թագաւորն իր անթիւ ու անհամար մըջիւններով եկել է ու երախտագէտ մըջիւնները շաղ տւած կորեկը հաւաքել են, լցրել տոպրակները՝ իրար կողքի շարել։

Թագաւորի աղջիկն ինքն իր ոտով գալիս է այգին, իր աչքովը տեսնում է, որ երիտասարդը իր էս առաջարկն էլ է կատարել, զարմանում է, բայց իր գոռոզութիւնից չի կոտըւմ, ասում է։

— Թէկ երկու առաջարկս էլ կատարեցիր, բայց դու չես կարող դառնալ իմ ամուսինը, մինչև ինձ համար չըբերես կեանքի ծառի խնձորը։

Երիտասարդը իր օրումը լսած էլ չի լինում թէ ինչ բան է կեանքի ծառը կամ որտեղ է բուսնում։ Վեր է կենում, մի ճամփայ ընկնում գնում, թէ որտեղ գուրս կըդամ՝ դուրս։

Գնում է աշխարհքէ աշխարհք անց է կենում, մի իրիկուն էլ մտնում է մի անտառ, յոզնած մի ծառի տակ նըստում է ու ննջում։ Յանկարծ լսում է, որ գլխի վերեկ ծառի տերևները խշխշում են։ Էս խշխշոցն ու վերեկց մի ոսկի խընձորի իր բուսն ընկնելը մին է լինում։ Սրա հետ միաժամանակ երեք ագռաւ ծառի ծէրիցը թռչում իջնում են ծնկներին ու ասում։

— Մենք էն երեք ագռաւների ձագերն ենք, որ դու մի ժամանակ սովամահից ազատեցիր։ Երբ մեծացանք ու իմացանք, որ դու կեանքի ծառի խնձորին ես ման գալիս, թուանք ծովերն անցկացանք, սարերն անցկացանք, հասանք աշխարհքի ծէրը, ուր բուսնում է կեանքի ծառը ու էս խնձորը բերինք քեզ համար։


Երիտասարդը ուրախանում, աշխարհքով մին է լինում,



խնձորն առնում է ու բերում տալիս թագաւորի աղջկանը,  
Թագաւորի աղջիկն խնձորն էլ որ տեսնում է, ասում է.

— Էլ խօսք չունեմ:

Խնձորը կէս են անում, միասին ուտում, ու էստեղ աղ-  
ջկայ սիրտը լցում է սիրով դէպի երիտասարդը: Ամուսնա-  
նում են ու երջանիկ, բախտով-թախտով միասին ապրում  
մինչև իրենց խորին ծերութիւնը:



1279